

**THE ISSUES OF FINANCIAL RECOVERY OF INSOLVENT ORGANIZATIONS
IN MODERN CONDITIONS SUMMARY**

A. S. BADALYAN

The issues of the recovery of economic entities in modern conditions are discussed in the work and for that reason the strategic programme is proposed.

**ՀԱՇՎԱՊԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ս. Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,

ԳՊՀ դասախոս

Ա. Ա. ՄՆԵՅԱՆ

**ԳՊՀ մագիստրատուրայի հաշվապահական հաշվառում բաժնի
1-ին կուրսի ուսանողությի**

Մինչ միասնական միջազգային ստանդարտների ընդունումը՝ ցանկացած երկրում ընկերությունները ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում էին այդ երկրում գոյություն ունեցող կանոններին համապատասխան: Արդյունքում նույն ընկերությունը՝ համաձայն ֆինհաշվետվության, տարբեր երկրներում ամրագրված կանոնների համաձայն, կարող է ինչպես շահութաբեր, այնպես էլ վճասաբեր լինել:

Դայլկական ստանդարտները ոչ միայն տարբերվում էին համապատասխան միջազգայիններից, այլև բազմաթիվ նոր ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից (այսուհետ՝ ՖՀՍՍ), որոնք ամրագրված չեն հայկական օրենսդրության մեջ: Միջազգային ստանդարտներին համապատասխանեցման անհնարինությունը բացասաբար անդրադարձավ բազմաթիվ հայկական ընկերությունների վրա: Միջազգային ընկերությունների դուստր ձեռնարկությունները ստիպված էին լրացնել ֆինհաշվետվության երկու ցանկ՝ մեկը տեղական կարիքների համար՝ հայկական ստանդարտներին համապատասխան, երկրորդը՝ հետևելով ՖՀՍՍ-ին՝ հիմնական ընկերության համար: Այլք բախվել էին նրան, որ հնարավոր չէր ներգրավել արտերկրյա ներդրումներ, քանի դեռ իրենց հաշվետվությունը չի համապատասխանում միջազգային նորմերին:

Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտները պարտադիր դարձան բոլոր ընկերությունների համար, որոնք գրանցված էին Եվրամիությունում 2005 թվականից: Այսօր այդ ստանդարտներն ընդունած երկրների թիվը գերազանցում է 100-ը [4]: 2009 թվականին 20 ինդուստրիալ երկրների խումբը կոչ արեց ստանդարտ մշակողներին կրկնապատկել ջանքերը՝ հաշվապահական ստանդարտների նույնացման աշխատանքը լիովին ավարտելու համար: Միա-

Վորող նախագծի նպատակն է ստեղծել ստանդարտների ընդհանուր հավաքածու, որոնց հիմքում հաշվապահական հիմնական սկզբունքներն են:

Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտների համակարգին անցումը Հայաստանի համար ոչ թե տուրք է մոդային, այլ կենսական անհրաժեշտություն, որն ի վերջո թույլ է տալիս վստահ դիրք գրադարձնել ներդրումների խիստ մրցակցային միջազգային չուկայում: Առանց ներդրումների երկրի գարգառումը զգալիորեն կդժվարանա, եթե ընդհանրապես հնարավոր լինի:

2007-2010թ-ի ֆինանսական ճգնաժամի հետևանքները լուրջ քաղաքական ազդակ հանդիսացան հաշվապահական հաշվառման համաշխարհային չափորոշիչների կոնվերգենցիայի համար [5]:

Սկսած 1998 թվականից, երբ Հայաստանի Հանրապետությունում ընդունվել էր ՀՀ օրենքը հաշվապահական հաշվառման մասին, մեծ ինտենսիվությամբ իրականացվում են հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումներ: Այս գործընթացի զգալի մասը համարվում է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների թողարկումը և կիրառումը: 2008 թվականի դեկտեմբերի 26-ին Հայաստանի օրենսդրությունը փոխվեց: Այդ փոփոխությունների հետևանքներից մեկն այն էր, որ ՖՀՍՍ-ների կիրառումը պարտադիր է նաև Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների համար, որոնք պետք է անցում կատարեին ՖՀՍՍ-ների համապատասխան ժամկետներում:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից շարունակական մշակումների արդյունքում թողարկվել են նոր ստանդարտներ: Կողյունքում՝ տվյալ պահին առկա Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներից (այսուհետ՝ ՀՀՀՀՍ) 5-ի՝ ՀՀՀՀՍ 4 «Մաշվածության հաշվառում», ՀՀՀՀՍ 14 «Սեզմենտային հաշվետվություններ», ՀՀՀՀՍ 22 «Զեռնարկատիրական գործունեության միավորումներ», ՀՀՀՀՍ 30 «Բանկերի և նմանատիպ ֆինանսական հաստատությունների ֆինանսական հաշվետվություններում բացահայտումներ» և ՀՀՀՀՍ 35 «Ընդհատվող գործառնություններ», ՀՀՍՍ համարժեքները ուժը կորցրած են ճանաչվել [2]: Սակայն ՀՀՍՍ-ի կողմից թողարկվել են 9 նոր ստանդարտներ, որոնք սկսած 2003 թվականից կոչվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՍՍ): Դրանք են՝ ՀՀՍՍ 41 «Գյուղատնտեսություն», ՀՀՍՍ 1 «ՖՀՍՍ-ի առաջին անգամ ընդունումը», ՀՀՍՍ 2 «Բաժնեմասի հիմքով վճարումներ», ՀՀՍՍ 3 «Զեռնարկատիրական գործունեության միավորումներ», ՀՀՍՍ 4 «Ապահովագրական պայմանագրեր», ՀՀՍՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատվող գործառնություններ», ՀՀՍՍ 6 «Բնական ռեսուրսների հետազոտում և գնահատում», ՀՀՍՍ 7 «Ֆինանսական գործիքների բացահայտում» և ՀՀՍՍ 8 «Գործառնական սեզմենտներ»: Մնացած ստանդարտների զգալի մասում տեղի են ունեցել էական փոփոխություններ, ընդ որում՝ 4-ում փոխվել են նույնիսկ վերնագրերը. ՀՀՀՀՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի գույտ շահույթ կամ վճար, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ»-ը՝ ՀՀՍՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»-ի, ՀՀՀՀՍ 10 «Հաշվապահա-

կան հաշվեկշոի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր»-ը՝ ՀՀՍՍ 10 «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր»-ի, ՀՀՀՀՍ 31 «Համատեղ ծեռնարկություններում նաևնակցության արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում»-ը՝ ՀՀՍՍ 31 «Համատեղ ծեռնարկություններում նաևնակցություններ»-ի, ՀՀՀՀՍ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը»-ը՝ ՀՀՍՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացում»-ի [3]:

Ֆինանսական հաշվետվության միասնական չափորոշիչները խոչընդոտների վերացման գործընթաց է ազատ արտաքին առևտորի զարգացման ու ազգային տնտեսությունների ավելի սերտ ինտեգրման համար: Գլոբալացման հետ մեկտեղ տեղի է ունենում ապրանքների, ծառայությունների ու կապիտալի միջազգային շուկաների ինտեգրում: Եթե մինչ այս ընկերություններն ակնկալում էին կապիտալի ֆինանսավորումը ներքին շուկաներում, ապա հիմա կարող են առավել մեծ աստիճանով վարկային ու բաժնետիրական կապիտալ ներգրավել ինչպես այն երկրի ներսում, որտեղ գործունեություն են ծավալում, այնպես էլ դրանից դուրս:

Ֆինանսական հաշվետվության միասնական չափորոշիչների առկայության հիմնական առավելություններից մեկն այն է, որ դրանք բույլ են տալիս կապիտալի միջազգային շուկաներին գնահատել ու համեմատել տարբեր ընկերությունների գործունեության արդյունքներն ավելի ցուցանիշային, արդյունավետ միջոցով: Դա կնպաստի ընկերությունների՝ կապիտալի ներգրավմանը և բույլ կտա նվազեցնել ֆինանսավորում հայթայթելու նպատակով կատարվող ծախսնը:

Ֆինանսական հաշվետվությունը ֆինանսական միջնորդության, արտերկրյա ներդրումների ու զգալի տնտեսական աճի անկյունաքարն է: Իհարկե, լուրջ ֆինանսական ռեժիմը ինքնին չի լուծի արտերկրյա ներդրումների բոլոր խնդիրները, սակայն դա քայլ է ճիշտ ուղղությամբ:

2007-2010թ-ի ֆինանսական ճգնաժամի հետևանքները լուրջ քաղաքական ազդակ հանդիսացան հաշվապահական հաշվառման համաշխարհային չափորոշիչների կոնվերգենցիայի համար:

ՖՀՍՍ-ներին անցումը այնքան էլ պարզ չէ, ինչպես կարող է թվական առաջին հայցքից: Դա այդպես է նույնիսկ այն դեպքում, եթե նախորդ համակարգը, որից անցում է կատարվում ՖՀՍՍ-ներին, եականորեն համապատասխանել է ՖՀՍՍ-ներին:

Այն հայկական ընկերությունները, որոնք գործում էին ՀՀՍՍ-ներին համապատասխան, չէին կարող հպարտանալ նրանով, որ իրենց կողմից կազմված ֆինանսական հաշվետվությունը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, նույնիսկ այն պարագայում, որ Հայաստանում կիրառվող ստանդարտները հիմնվում էին 2000 թվականի ՖՀՍՍ-ի գլխավոր սկզբունքի վրա: Առաջին միջազգային ստանդարտում (IAS 1) կանոն կա, որ պնդում է. «ֆինանսական հաշվետվությունը չի կարող ճանաչվել միջազգային ստանդարտներին համապատասխանող, եթե այն չի համապատասխանում ՖՀՍՍ-ի բոլոր պահանջներին» [1]:

Վերլուծության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խնդիրները.

- Գոյություն ունի ստանդարտների հայերեն թարգմանության խնդիր՝

դրանք անհրաժեշտ է մշտապես համապատասխանության բերել նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներին: Եթե թարգմանության պրոցեսը միշտ կախված լինի USAID ֆոնդերից, ապա վտանգ կա, որ նոր ստանդարտները Հայաստանում չեն կիրառվի միայն այն պատճառով, որ դրանք դեռ թարգմանված չեն: Բանն այս է, որ Հայաստանում չկա մի որոշակի մարմնին, որը ստանդարտներ է սահմանում: Այդպիսի մարմններ կարող եք բյուրոյի հետ սերտ համագործակցությամբ աշխատել, ու բոլոր նորովի առաջարկվող ստանդարտները կարող էին ուսումնասիրվել, ու դրանք կարելի եք մեկնաբանել: Իսկ այժմ բոլոր մեկնաբանություններն արվում են առանձին անձանց կողմից, այլ ոչ թե պաշտոնական արձագանքների տեսքով:

● Հայաստանում ֆինանսների նախարարության կողմից մինչ այժմ չկան համապատասխան ենթաօրենսդրական ակտով հաստատված ՖՀՄՍ-ների՝ համապատասխանող ֆինանսական հաշվետվության ձևեր և դրանց լրացման ցուցումներ, չնայած որ կազմակերպությունները, ինչպես արդեն վերը նշվեց, պարտավորվել են 2011թ. հանար ֆինանսական հաշվետվությունները կազմել և ներկայացնել միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս հարցը ևս խիստ արդիական է, քանզի պետական լիազոր մարմնի կողմից դաշտում հստակ կանոններ չսահմանելու դեպքում առաջանում են բազմաթիվ տարածայնություններ և ֆինանսական հաշվետվություններ կազմողների, և դրանց հետագա օգտագործողների շրջանակներում:

● Գործնականում նոր հաշվապահական կանոններին ծանոթանալը լիովին կախված է մասնավոր սեկտորում անցկացվող սեմինարներից:

Համապատասխանաբար առաջարկվել են հետևյալ լուծումները:

● Նախ Հայաստանի Հանրապետությունում ստեղծել պետական լիազոր մարմնին, որը կզբաղվի ՖՀՄՍ-ների պարբերական թարգմանությամբ, որպեսզի մեր երկրի կազմակերպությունները ետ չնանան միջազգային ստանդարտների պարբերական զարգացող տեմպից, և երկրորդ՝ այդ մարմնին տալ համապատասխան պետական նակարդակի լիազորություններ՝ պաշտոնական պարզաբանումներ կատարելու համար, քանզի միջազգային ստանդարտները նոր որդեգրող երկրի կազմակերպություններում պարագարաբար առաջանում են հարցեր:

● Հայաստանում ֆինանսների նախարարության կողմից համապատասխան ենթաօրենսդրական ակտով ՖՀՄՍ-ներին համապատասխանող ֆինանսական հաշվետվության ձևերի և դրանց լրացման ցուցումների կազմում և հաստատում:

● Հայաստանի Հանրապետությունում ևս ընդունել և օրենսդրական մակարդակով հաստատել Խորհրդի ձևակերումների վրա հիմնված դասակարգումները՝ հանրությանը հաշվետու բոլոր սուբյեկտները լիովին ներգրավվեն ՖՀՄՍ-ի կիրառման պրոցեսում, իսկ այլ բոլոր ընկերությունները՝ հանրային շահով կամ առանց դրա, դեկավարվեն փոքր ու միջին բիզնեսի համար ՖՀՄՍ-ով, իսկ ահա բոլոր միկրոսությեները զբաղվեն միայն հարկային հաշվապահությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 235-Ն որոշում, էջ 4
2. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2159-Ն որոշում, էջ 1
3. Review, мир деловых людей, "Внедрение МСФО на армянском рынке" 2011 . N 62 , стр. 96
4. Review, мир деловых людей, «Внедрение МСФО на армянском рынке», 2011 . N 62 , Եղնար ընդ Յանց ընկերության մասնագետներ, էջ 106

ЗАДАЧИ ВНЕДРЕНИЯ МЕЖДУНАРОДНЫХ СТАНДАРТОВ БУХГАЛТЕРСКОГО УЧЕТА

**C. M. МАРКОСЯН
A. A. МНЕЯН**

В статье представлена необходимость внедрения международных стандартов бухгалтерского учета, их возможности и задачи, которые возникли в процессе внедрения. Предложены пути решения проблем внедрения МСФО.

THE INVESTMENT PROBLEMS OF THE INTERNATIONAL STANDARDS OF ACCOUNTING

**S. M. MARKOSYAN
A. A. MNEYAN**

In this article the necessity of investing the International Standards of Accounting as well as its opportunities, the problems which arise during the investment and the possible ways of their solution are presented. The invalid and newly invested standards are discussed in the article as well.

РОЛЬ ГОСУДАРСТВА В РАЗВИТИИ МАЛОГО БИЗНЕСА

Н. В. РИНКИАШВИЛИ

*Кандидат экономических наук, доцент, преподаватель кафедры экономики и туризма
Телавского государственного университета им. Я. Гогебашвили*

Развитие малого бизнеса является важным фактором социального и экономического развития страны в целом. Для решения ряда проблем связанных с политическими, социально-экономическими, демографическими проблемами необходимо иметь в виду все особенности данных проблем, в их числе особенно место занимает уровень воздействия факторов бизнеса и уровень развития самого бизнеса.

Изменения последних лет, которые имели место в Грузии, возимели положительное воздействие на развитие бизнеса и производства, данное подтверждается ежегодными исследованиями Всемирного Банка и Международной Финансовой Корпорации "Doing Business", согласно которой в 2012г. среди 183 стран по упрощению бизнес